

ու պնակները օրհնած ջրով սրսկեց: Եկեղեցիներն ըստ մասին կնքուած, ըստ մասին կործանած, սուրբ մատեններն՝ այրած, եկեղեցւոյ անօթները կողոպտուած էին: Սուչափա հանդիպածները՝ պատահեցան նաև գաւառները, ուր Հայեր կը բնակէին, Խոթենի, Սէրէթի, Ասբաղարի, Վասլուի, Պոչանի, Ռումանի մէջ: — Մատենագիրը խօսքերն իւր ազգայիններուն ուղղելով՝ կ'ըսէ. «Այս ամէն խեղճութիւնները մեր անբախտներն մեղացը համար հասան մեր վրայ, որ դարեցանք աղօթելէ, մոռցանք ողորմածութիւնը, չսիրեցինք զԱստուած, չպատուեցինք ծնողքնիս ու անփոյթ եղանք հիւրասիրութենէն:»

Ասոնք են ահա Պատկանեանին խօսքերը: Մեր ունեցած ձեռագիրն՝ որ Հայաքաղաքին Հայոց Ս. Երրորդութեան եկեղեցւոյն մատենագարանին ստացուածքն է, ու կը կրէ ձեռագրաց բաժնին IV. դարանին ԽԳ. ա. թուանշանները, վեշտասանածալ ստուար մատեան մըն է, որ կը պարունակէ շատ մ' անծանօթ հոգեւոր երգերէ, տաղերէ ու գանձերէ զատ՝ զանազան նիւթերու վրայ գրուած բազմաթիւ զուարճալի ու զաւեշտական ոտանաւորներ:

Մինասայ բանաստեղծութիւնը կենդանի է, վառվռուն ու ազդու. եւ թէպէտ կրկնումներ շատ կան մէջը, եւ ոտքերուն չափին մէջ ալ խիստ աղատութիւն շնորհած է ինքն իրեն, բայց մեկալ կողմանէ ոճը շատ բնական, պարզ, ընթացիկ ու հաճոյական է: Լեզուն աղաւաղեալ է, եւ կը ցուցնէ դրաբար լեզուին՝ աշխարհաբարին անցումը: — Մինաս՝ Լեհաստանի Լէմպերկ քաղաքը վախճանած կ'երեւայ, կամ գոնէ այն մակարերել կու տայ իւր ոտանաւորներէն մեկուն վերնագրին վրայ գրուածն՝ թէ «Իլովաց (Լէմպերկ) տունն վախճանեցաւ.», բայց թէ որ տարին, այն չենք գիտեր: Իւր մէկ ուրիշ բանաստեղծութենէն — որ նոյնպէս տպագրութեամբ դեռ լոյս տեսած չէ, եւ գրուած է «Ի Թավականիս հազար ամի, եւ Ժ. Թիւ աւելի» (որ է ըսել՝ 1563ին) իրեն համար կ'ըսէ՝ «Ծեր ալեօք եմ եւ սպիտակ, ահայ չկայ բերանս դարտակ» — կ'երեւայ թէ անկէ ետքը շատ ժամանակ անցուցած չըլլայ այս աշխարհքիս վրայ:

Այս ընդհանուր տեսութենէն ետեւ տեսնենք Մինասայ սարկաւագին ողբերգական բանաստեղծութեան պարունակութիւնը, զոր ըստ ամենայնի ձեռագրին պէս պահած ենք՝ ուղղագրական վրիպակներն անգամ:

Ողբ ի վերայ օշախաց երկրի հայերուն ի Թաւախաթցի Միհասս ասրիօագի ուսուցեալ¹:

Պոչեմ առ ձեզ ողբերական,
հաւաքելով յոյժ լայական,
քահանայք եւ աշխարհական,
ծուներ գրեք ամենեքեան:

Ի թիւն հայոց ու ամին,
տասն եւ վեցն էր օգոստոսին,
աստուածածնի փոխման աւրին,
ի տերուելի աւր կիրակին:

Ի այս վերջին ժամանակի,
փորձանք եկաւ հայոց ազգի,
վասն մեզացն մեր յայտնի,
զոր գործեցաք ի յաշխարհի.

Հիւսիսական կողմ աշխարհի,
փոքրիկ երկիր կայ օշախ,
բազում հայք կայր իւրեանց միջի,
լաւ քրիստոնայք եւ անուանի:

Երիցանիքն ուսածք էին,
ժամայտեցօք պայծառ էին,
խիստ փառաւոր հայեր կային,
յանկարծ փորձանք եկօ նոցին:

Աւլախ ազգին մեծ վոյվոտան,
անուամբ կոչէր ինքն ըշտրֆան.
մանուկ տիաւք ամբարտաւան,
բազում չարիք արար մարդկան:

Նա հօստօվն էր հոռօմի,
դաւանութեամբ քաղկեդոնի².
նոր չար գործեաց հայոց ազգի,
զոր ոչ բընաւ եղել երկրի:

Չար թագաւորքն առաջին,
այտպէս չարիք ոչ արարին.
զոր դայ գործեաց հայոց ազգին,
լուսաւորչի փոքրիկ հաւտին:

Աստուածածնին աւրն փոխման,
աւլախաց ազգի չար վոյվոտան,
իւր պարոնայքն միաբան,
սեչով³ քաղքի բերդն մշտան:

Եպիսկոպոսք իւրեանց ազգին,
աւագ էրեցք ի միասին,
նրստան ի հայ ի սեղանին,
ուրախանալ ի միասին:

Խորհուրդ արին իւրեանց միջին,
չարիք բազումք սերմանեցին.
շատոց ոխ կայր իւրեանց սրտին.
սուրբ հաւատոց լուսաւորչին:

Ի լուսանալ օր կիրակի,
ըշտրֆան պարոնն ձիււորի,
գայ մրտանէ եկեղեցի,
աստուածածնի հայոց ազգի:

Ելաւ ոտիւքն ի խորանին,
զխորհուրդն առաւ ի իւր ձեռին,
յանկարծակի զարկ ի գետին.
եւ չար ոտիւք կոխան արին:

Ըզուրք մեռնոն էջմիածնին,
զայն ալ վաթեց ի վերայ գետնին,
չունք եւ մարդիք կոխան արին,
եւ աղիք մեր խարշատէին:

Չինչ որ գիրք կայր եկեղեցին,
եւ զմեծ պատկերքն խորանին,
խաչեր՝ ւ բակի մազրզմանին,
ոսկէջը բած եւ մեծայագին:

Ժողովեցին ի միասին,
տարին դրին ի վիստեռին.
ըզվարդապետն եւ զարեղանին,
ձեռն կապած բանդ արգելին:

¹ Պատկանեանի հրատարակութեան մէջ վերնագրին այսպէս չէ, այլ՝ Սիւսոսայ Թաւախոյոյ ողբ է վերայ հայոց աշխարհին Ուլախաց:
² Թոխաթեցին հայ եկեղեցւոյ էական ըմբռներ է քաղկեդոնի մերժող ըլլալ:
³ Սուչափա: